ինքնագոյի... օրհնութիւն հօր... սիրեալ զեղանիցի... ի վերայ աստուածարնակ սուրբ ուխտիս, եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց եւ միաբան եղբարցն ամենեցուն որ աստ կան հաւաքեալ... եւ ընդ աստուածապարգեւ օրհնութեանս դիտութիւն լիցի ձեզ... զի այս սուրբ Աստուածածին անուն եկեղեցիս ... ի թվին ՋԿԳ (1514) ոմն բռնաւոր Սօփ անուն... աւերելով, թալանելով եւ կողոպտելով երեք ամ ամայի եւ աւեր մնաց քաղաքս այս, վանքին եկեղեցիք: Ցիշատակարան (էջ 291–293):

Այսպէս Բաղէշը եւ շրջակայ աւաններն ու վանքերը թալլող աւերող բռնակալին անունը Սօփ եղած է որ 1514 թուականին սարսափի տակ պահած է այդ շրջանը:

Այս բռնակալը Թիւրքմէն ցեղէ մը կըրնայ եղած ըլլալ: Թիւրքմէնները, ինչպէս արեւելեան Հայաստանի, նոյնպէս ալ Դաշտային Կիլիկիոյ մէջ, Ամիդէն սկսելով Տլուք դաւառի, Մարաշի եւ Հալէպի շրջակայքը թափանցած էին Թ. դարէն սկրսեալ: Հալէպի Նուրէտտին ամիրան Թիւրքմէն յելուզակներու միջոցաւ դերի բռնել տուաւ խաչակիրներու ձօպին կոմսը որ կը տիրէր Կորիսուի, Մարաշի, Թլպաշարի երկիրներուն 1151 թուականին:

Թիւրքմէն վաչկատուն ցեղը դեռ մինչեւ մեր օրերը խմբական բազմութիւնով կը թափառին Կիլիկիոյ մէջ՝ ուր անոնք Եէօրիւք կամ Աւշար անունով ծանօթ են. իսկ Մարաշի եւ Այնթէպի հիւսիսային դաշտ ու լեռներու մէջ Ղըլըճլը եւ Թէճիրլի կ'անուանուին: Սոնք վրանաբնակ աւազակաբարոյ ցեղ մըն են. նստակեաց կեանք չունին. ձմեռը դաշտային Կիլիկիոյ տաք կլիմային, իրենց հօտերովը կը բնակին Պազարճըկ, Զէյնճիրլի ու Զուղուր – Օվայի մէջ. իսկ ամրան կը բարձրանան Տաւրոսեան լեռները, իրենց գօշերովը: Ահա այս թափառական Թիւրքմէն ցեղի պետերէն մէկը Սօփ անունով, տուած է իր անձնանունը Այնթապի մօտ բլրակի մը, որ մինչեւ մեր օրերը ծանօթ է Սօփ կոչումով: Աթոռակից Բարդէն Կաթողիկոս միամտաբար Ծով բառի աղաւաղումը կարծելով Սօփը, խեղաթիւրումով մը «կ'ամապարէ վասելու» թէ Շնորհալիի ծննդավայրը այս չոր ու ցամաք բլուրը ըլլայ, ուր կը կարծէ տեսնել Ծով–Դղեակին փլատակները քանի մը աւերակուած քարակոյտերու մէջ:

Մինչ, ինչպէս ըսինք քիչ առաջ, արդի Սօփ կոչուած բլուրէն քիչ հեռու կը դըտնուին լճակներու խումբ մը, որ ոչ ձիւնհալի ջուրերով կազմուած է եւ ոչ ալ ամրան տօթին ջուրերը չոգիանալով կը ցամքին. այլ ամառ ու ձմեռ հոսուն ջուրի աղբերով զոյութիւն ունեցող լիճեր են տասներկու քիլոմեդր երկարութեամբ եւ եօթը քիլոմեդր լայնքով: Այս լիճերուն քովը կը գտնուի Ծով–Դղեակը. հովիտի մը բերանը, ժայռերուն վրայ կառուցուած փոքրիկ բերդ մը, բայց կրկին կրնայ պարփակել ամբողջ Պահլաւունեաց սերունդը, իրենց ձիավարներովն ու իշխաններովը. նոյնիսկ Կաթողիկոսի վայել մատուռով մը օժտուած: Այս բերդին մէջ բնակած են Շահան, Վասիլ, Գրիգոր, Ներսէս Պահլաւունիները իրենց նախնիներովը առ նուազն հարիւր տարիներ:

Աթոռակից Բարդէն Կաթողիկոսին Սօփ բլուրը հաղիւ 5 – 6 մեղր տարածութիւն ունեցող հարթ գագաթ մը ունի, ուր երկու հոգի հաղիւ կրնան պարփակուիլ, իսկ ատրոտի աւերակները մատուռի մը աւերակները կրնան ըլլալ եւ ոչ դղեակի մը:

Ահա թէ ի՛նչպէս Թիւրքմէն անձնանունը մը Սօփ, կը դառնայ Ծով, ատուդարանական – լեղուաբանական քաշկոտուքով մը:

Տոքթ. Յ. Տէր Ղազարեան

Հալէպ

ԷՋԵՐ ՀԱՅ ԳՐՉԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐԻԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

ԺԷ. ԴԱՐԻ ՄԻ ՆՈՐ ԳՐՉԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ

Ի. Զ. Թ. = 1640

Ժէ. դարում Սպահանում գրած այս ձեռագիր Աւետարանի պատմութեան էջերը ձեզ տանում են 1640 թուականը: Դա Իրանի շահ Սէֆի թագաւորութեան ժամանակաշրջանն է, երբ Պարսկաստանի հայ ժողովուրդն ապրում է խաղաղ պայմաններում: Այդ հանգամանքը վկայում են նաեւ Նոր–Զուղայի պատմագիր՝ Յարութիւն Տէր–Յովհաննեանցի հետեւեալ տողերը. «Յետ մեռանելոյ Շահաբասայ մեծի, Թոռն նորա Շահսէֆի մանուկ չորեքտասանամեայ նստաւ թագաւոր ըստ ոմանց 1629, եւ ըստ ոմանց 1631: Զորեքտասան ամ թագաւորեաց, յորում ժամանակի վիճակ ժողովրդեանն հայոց, որ ի պարս ընթացաւ ըստ կարգին եղելոյ ի ժամանակս Շահաբասայ առաջնոյ, զի սմա եւս սիրելի լեալ ազգս հայոց՝ տարածեաց առ նոսա զչնորհս արքայական, որով մնացին նոքա ի խաղաղութեան (« Պատմութիւն Նոր–Զուղայու», 1880, Ա. հատ. էջ 80)»:

Դա այն պատմաշրջանն էր, երբ Նոր – Զուղայի հայ ժողովրդի «խմաստուն» եւ «բարեպաշտ», իշխանապետ՝ Խոջա Սաֆրազի ապարանքում հիւրասիրւում է Շահ Աբբաս երկրորդ արքան: Զեռներէց, գործունեայ եւ ճարտար մի վաճառական, որի անունը հռչակւում է ո՛չ միայն Իրանում, այլ եւ Եւրոպայում: Այդ երեւոյթներն են ընդգծում Նոր–Զուղայի հայոց գերեզմանատանը հանդիպող Խոջայի տապանաքարի վրայ քանդակւած հետեւեալ տողերը.

« Ա՛յ իմ անմահ Խոջայ, որ էիր հայոց թագաւոր,
Անումտ Սաֆրազ կոչի՝ սրնքաց զօրեղ դատաւոր.
Խելօք, քո ճարտար լեզվէտ զարմանար ամէն թագաւոր,
Շատ իշխան քո տեսուտ փափազ ահեղատես իշխան փառաւոր »:

Ժէ. դարի նոյն շրջանումն էլ լուսաւոր, առաջադէմ եւ պայծառ մի հոգեւորականի հերոսական ջանքերով Նոր–Զուղայի «Ամենափրկիչ» վանքը դառնում է մշակութային շարժման մի փարոս: Դա թեմի ժամանակի առաջնորդ Խաչատուր վրդ. կեսարեանցն է, որ «բազում աշխատութեամբ» հիմնում է Իրանի եւ հայկական տպագրութեան պատմութեան մէջ հռչակուած առաջին տպարանը եւ 1641 թւին տպում է «Հարանց Վարք»ը:

Ահա այս շրջանում Սպահանում ապրող երկու արուեստագէտ սարկաւագներ գրում են մի ձեռագիր Աւետարան, որը Ժէ. դարում Նոր–Զուղայից տանում են Սպահանի Բուրարի գաւառի Շաւրաւա գիւղը, ուր ամբողջ 288 երկար տարիներ Տէր – Յակոբենց զերդաստանում խնամքով պահում են: Այնուհետեւ՝ 1928 թւին, նոյն ազգատոհմը ձեռագիրը տանում է Քեազազ գաւառ, 1942 թւին՝ Սուլթանաբադ, իսկ 1945 թւին՝ Իրանի մայրաքաղաքը՝ Թէհրան, ուր մինչեւ օրս էլ տիրացու Սերոբ Տէր–Յակոբեանն առանձին գուրգուրանքով պահում է:

Ահա գրչագրի ոեդմ պատկերը.

Մեծութիւնը՝ 19 × 14 սմ., կազմը՝ տախտակի վրայ կարմիր թաւշապատ,

ԺԷ. դարում, 1640 թուին Սպահանում վրձինուած աւետարանի 376–րդ էջը զարդարող խորանը։
(Արամ Երեմեանի գրական արխիւից)։

թերթը՝ 300, նիւթը՝ բամբակի թուղթ, գրութիւնը՝ երկսիւն, տողերը՝ 21, գիրը՝ բոլորագիր, հանգամանքը՝ բաւարար. պակասում են երկու աւետարանիչների նկարները, զարդագրութիւնը՝ սկզբում վրձինուած է Մատթէոս աւետարանչի նը-կարը, որ բաց գրքի առջեւ նստած գրում է։ Դա կանաչ, մութ կարմիր եւ կապոյտ գոյներով նկարուած միջակ վրձինի մի արտադրութիւն է։ Նշենք նաեւ 280–րդ էջը պատկերող Ղուկաս Աւետարանիչը, որ Աւետարանը կրծքին դրած, խորհրդաւոր հայեացքով ձեղ է նայում։ Նկարում կանաչ, կարմիր եւ կապոյտ երանգներն իրար են ներդաշնակում։

Աւետարանը զարդարում են նաեւ երեք խորաններ, որոնցից երկուսը տեղ–տեղ դրկուել իրենց ոճաւորութեան հարազատութիւնից։ Լուսանցազարդերը՝ բազմաթիւ էջերում իշխում են զարդանկարներ եւ թռչնազարդեր։ Սակայն, Աւետարանի դեղեցկութիւնը կազմում են խորանների եւ գլուխներն սկզբնաւորող մանրանկար դեղազրերը, գրիչը՝ Յովսէփ եւ Սարուխան սարկաւագները, գրչութեան վայրը՝ Սպահան ու ժամանակը՝ Ռ. Զ. Թ. (1089 + 551 = 1640)։

Զեռագիր Աւետարանի մի երկու նկարները Նոր–Ջուղայի ԺԷ. դարի նկարչական դպրոցը պատկերող ցայտուն վաւերագրեր են։ Այդ տեսակէտից դեղարուեստական ուրոյն արժէք է ներկայացնում 376–րդ էջում կապոյտ, կարմիր եւ կանաչ երանգներով վրձինուած խորանը, որ ԺԷ դարի առաջին կիսում Նոր–Ջուղայում զարգացած մանրանկարչական արուեստի պարզ, բայց դեղեցիկ մի ստեղծագործութիւն է։ Զեռագրին առանձին փայլ են տալիս նաեւ դեղազրերը, որոնք իրենց պարզութեան մէջ նուրբ են եւ տպաւորիչ։ Նոյնպէս գրչագրի դեղեցկութիւնը կազմում են բոլորագրերը, որոնք երկու տարբեր, բայց իրար շատ նման ձեռագրեր են։ Դրանք, իրենց ամբողջութեամբ, տպագրուած տառերի տպաւորութիւն են թողնում եւ ձեղ ցայտուն դաղափար տալիս ԺԷ. դարում Նոր–Ջուղայում զարգացած գրչագրական արուեստի մասին։

Յիշատակարան

Փառք քեզ հայր Աստուած, գոհու (գրուած է կարմիր թանաքով, ապա՝ սեւ) թիւն քեզ Աստուած իմ, Յիսուս Քրիստոս, բարեբանեալ ես հողիդ սուրբ Աստուած ճշմարիտ, որ արժանի արարէր զանպիտանս ի յամիրս հասանել ի վերջին գ ի տառիս։ Արդ ա՛հեալ գովեալ եւ բարեբանեալ որ երրորդութիւնդ անդրաւ յաւիտեան իւս ամէն։

Որ եւ կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տառիս այս մարդարտաշար եւ վարդափթիթ բուրաստանիս, որ է սա ընտիր օրինակէ։ Որ եւ գրեցաւ սա ի յերկիրս Ասպահան ձեռամբ բ. սարկաւագաց Յովսէփայ եւ Սարուխանի. յիշեց(էք) ի Քրիստոս. գրեցաւ Թվականիս մեր Ռ. Զ. Թ. (1089+551=1640), ի թագաւորութեան շահ Սէֆուն եւ առաջնորդութեան Տէր Խաչատուր արհեպիսկոպոսի ի վայելումն մանկանց Սիոնի։ Ոմն բարեմիտ եւ աստուածասէր ի բաղում ժամանակէ ցանկայր սմա. որ եւ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց եւ յիշատակ Տէր Իսրայէլին, եւ ծնողացն Վէլիճանին, Խանաղին Բալուէ եւ կողակցին Թանկսօլթանին եւ որդոցն Ոսկանին, Փանոսին եւ Մարտիրոսին, յիշատակ իւրեանց. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս ողորմի ասացէք. ամէն։ Յիշեցէք ի Քրիստոս զՏէր Հայրապետն որ կամակից եղեւ սուրբ աւետարանիս. եւ գրել եւ առնուլ լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք նմա զի եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Այստեղ ընդգծենք մի հանգամանք եւս. Նոր–Ջուղայի ԺԷ. դարի հայ մանրանկարչական արուեստն ունի բազմաթիւ այլ նմուշներ, որոնք կարող են իրենց պատուաւոր տեղը գրաւել դեղարուեստի պատմութեան մէջ։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թեհրան

La Cooperazione in Armenia conserva tuttora le sue primitive origini

Antico Paese dell'Asia Minore, suddiviso fra la Turchia, la Russia e la Persia, l'Armenia ha una popolazione in prevalenza agricola, che ha conservato le primitive forme di cooperazione che qui vogliamo esaminare.

Appena gli interessi delle singole famiglie vengono in contrasto, appena si manifesta un ostacolo che supera la forza di una singola famiglia, i contadini si uniscono in società e comunità. Così si formarono in Armenia le «decine» (in armeno «Tasniak» e «Aragasc») e le comunità per l'affitto di terreni e di pascoli. Quest'ultima forma era richiesta, perchè i contadini possedevano poca terra e perchè la campagna esistente apparteneva ai monasteri, allo Stato e ai grandi proprietari terrieri. Queste campagne venivano affittate ai contadini che già possedevano un po' di terra. A questo scopo questi si unirono in cooperative, che comprendevano da 10 fino a 15 soci. L'appezzamento di terra affidato così veniva dunque lavorato in comune da tutti i soci. Dal totale del raccolto essi sottraevano in primo luogo il canone di affitto e le spese, poi dividevano il rimanente secondo il lavoro prestato.

In alcune regioni veniva praticato un altro sistema di collaborazione e di spartizione. Il terreno affittato in comune veniva diviso e affidato — come in proprietà — a ciascun socio. Per la lavorazione del terreno si era costituita una forma primitiva di cooperazione, detta «Aragasc». Tale istituzione si era resa necessaria da un lato per la impossibilità di tenere una impresa agricola colle singole forze dei proprietari isolati, dall'altro per il desiderio di sfruttare nel modo migliore appezzamenti di terreno che — per estensione — erano ben poca cosa e appartenevano o a singoli proprietari oppure a piccole famiglie, che non erano in grado di avere un' economia indipendente. Così si formarono le cooperative dette «Aragasc», che erano nella stessa situazione economica di necessità.

Per farci un'idea dell'istituzione «Aragasc», dobbiamo tener presenti i principali momenti della vita dei contadini. Per coltivare il terreno il contadino abbisogna per lo meno di un paio di buffali e di buoi, che non sempre può avere; lo stesso vale anche per certi strumenti e macchine agricole.

© National Library of Armenia